«ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

ԹԻՎ 25-08

«ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.04.2025

Ղեկավարվելով «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության 11.26 կետով՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային և դեպոզիտար ծառայությունների սակագները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշման ընդունման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել շահագրգիռ բոլոր հաճախորդներին ծանուցումը, ինչպես նաև սույն որոշման հրապարակումը ընկերության պաշտոնական կայքում:
3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 16.05.2025 թվականից:
4. Սահմանել որ, 16.05.2025 թվականից ուժը կորցրած է ճանաչվում 25.10.2024 թիվ 17 որոշմամբ հաստատված «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային ծառայությունների սակագները:

«Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝

Անահիտ Շաքարյան

Հավելված 1
«ԻՆՎԻԱ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի
25.04.2025թ-ի թիվ 25-08 որոշման

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ	
I. **Բրոքերային հաշիվներ**	
Հաշվի բացում, սպասարկում, փակում	Անվճար
Նվազագույն դեպոզիտ	Կախված է առևտրային հարթակից*
II. ՀՀ արժեթղթերով բրոքերային գործարքներ	
Պարտատոմսեր	Անվանական արժեքի 0.05%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ
Բաժնետոմսեր	Գործարքի գնի 0.1%, նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ
III. **Օտարերկրյա արժեթղթերով բրոքերային գործարքներ**	
Ֆիքսված եկամտով արժեթղթեր	Կախված է առևտրային հարթակից*: Առևտրային հարթակով սահմանված սակագնին գումարած գործարքի գնի 0.25%, (նվազագույնը՝ 100 դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ 100 միավոր այն արժույթով, որով արժեթուղթը գնանշվում է) բրոքերային գրասենյակի միջոցով պատվերով գնման դեպքում:
Բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, ֆոնդի փայեր / վաճառվող կարգավորվող շուկաներում	Կախված առևտրային հարթակից*: Առևտրային հարթակով սահմանված սակագնին գումարած գործարքի գնի 0.25%, (նվազագույնը՝ 100 դոլարին համարժեք ՀՀ դրամ կամ 100 միավոր այն արժույթով, որով արժեթուղթը գնանշվում է) բրոքերային գրասենյակի միջոցով պատվերով գնման դեպքում:
IV. Դրամական միջոցների մուտքագրում և դուրսգրում	
Դրամական միջոցների մուտքագրում հաշվին / ՀՀ դրամ	Անվճար
Դրամական միջոցների մուտքագրում հաշվին / արտարժույթ	Անվճար**
Հաշվից դրամական միջոցների դուրսգրում հայկական բանկերի հաշիվներին / ՀՀ դրամ	Անվճար**
Հաշվից դրամական միջոցների դուրսգրում արտասահմանյան բանկերի հաշիվներին / ՀՀ դրամ	Անվճար**, եթե միջոցները փոխանցվում են նույն երկրի բանկին, որտեղից (երկրից) դրանք ի սկզբանե փոխանցվել են Ընկերությանը, և փոխանցված գումարը մուտքագրված գումարին համարժեք է: Հակառակ դեպքում՝ եթե միջոցները մնացել են հաճախորդի հաշվին - մինչև 1 ամիս՝ դուրս բերվող գումարի 5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 1-ից 3 ամիս՝ դուրս բերվող գումարի 3%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ,

	- 3-ից 6 ամիս՝ դուրս բերվող գումարի 1.5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 6 ամիս ավել՝ դուրս բերվող գումարի 0,5% առավելագույնը 50,000 ՀՀ դրամ:
Հաշվից դրամական միջոցների դուրսգրում / արտարժույթ	Անվճար**, եթե միջոցները փոխանցվում են նույն երկրի բանկին, որտեղից (երկրից) դրանք ի սկզբանե փոխանցվել են Ընկերությանը, և փոխանցված գումարը մուտքագրված գումարին համարժեք է: Հակառակ դեպքում՝ եթե միջոցները մնացել են հաճախորդի հաշվին - մինչև 1 ամիս՝ դուրս բերվող գումարի 5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 1-ից 3 ամիս՝ դուրս բերվող գումարի 3%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 3-ից 6 ամիս՝ դուրս բերվող գումարի 1.5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 6 ամիս ավել՝ դուրս բերվող գումարի 0,5% առավելագույնը 50,000 ՀՀ դրամ:
ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ	
V. **Բրոքերային գործարքներ արտարժույթով**	
USD, EUR, RUB, այլ արժույթներ	Առևտրային հարթակից դուրս՝ անվճար, հայաստանյան առևտրային բանկերի փոխարժեքով: Առևտրային հարթակներից դուրս իրականացվող բոլոր փոխարկումների համար փոխարկման նվազագույն գումարը կազմում է 40,000 ՀՀ դրամ կամ համարժեք այլ արտարժույթ: Առևտրային հարթակներում՝ համաձայն առևտրային հարթակում գործող սակագների:
ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
VI. **Արժեթղթերի հաշիվների բացում և սպասարկում**	
Հաշվի բացում	Անվճար
Հաշվի փակում	Անվճար
Արժեթղթերի հաշվի սպասարկում	Ֆիքսված եկամտով արժեթղթեր – կախված է առևտրային հարթակից*: ԱՄՆ բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, ֆոնդի փայեր / վաճառվող կարգավորվող շուկաներում – կախված է առևտրային հարթակից* Եթե ընտրվում է պահառության այլ ձև (ոչ առևտրային հարթակի միջոցով), ապա

	շուկայական արժեքի 0.7%-ը (տարեկան տոկոսադրույք) (պահառության սպասարկման սակագինը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ հիմք ընդունելով 1 տարին 360 օր, սակայն գանձվում է ամսական կտրվածքով)
Հաշվի սպասարկում ՀՀ արժեթղթերի դեպքում	Կիրառվում է «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի «Արժեթղթերի հաշվառման եվ հաշվարկային միասնական համակարգի անդամի կողմից մատուցվող ծառայությունների սակագները»-ի համաձայն սահմանված դրույքաչափը և վճարման կարգը
Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի արգելափակում	Անվճար
Հաճախորդի նախաձեռնությամբ հաշվի արգելափակման դադարեցում	Անվճար
VII. **Արժեթղթերի դուրսգրում/փոխանցում***	
Արժեթղթերի հաշվին փոխանցում	Պարտատոմսերի անվանական արժեքի 0-0.5% Բաժնետոմսերի/ստացականների շուկայական արժեքի 0-0.5% գործարքի կնքման օրվան նախորդող օրվա փակման գնի հիման վրա
Հաճախորդի նախաձեռնությամբ արժեթղթերի դուրսգրում	Եթե արժեթղթերը կամ արժեթղթերի վաճառքից ստացված հասույթը (բացառությամբ այն դեպքի, երբ վերոնշյալ հասույթը փոխանցվել էր նույն երկրի բանկից, որտեղից (երկրից) որ հաճախորդը կատարել էր ֆինանսական միջոցների նախնական մուտքագրումը և փոխանցված գումարը մուտքագրված գումարին համարժեք է) մնացել են հաճախորդի հաշվին - մինչև 1 ամիս՝ դուրս բերվող գումարի 5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 1-ից 3 ամիս՝ դուրս բերվող գումարի 3%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 3-ից 6 ամիս՝ դուրս բերվող գումարի 1.5%, նվազագույնը՝ 100,000 ՀՀ դրամ, - 6 ամիս ավել՝ դուրս բերվող գումարի 0,5% առավելագույնը 50,000 ՀՀ դրամ: Միջնորդավճարը կիրառվում է բաժնետոմսերի/դեպոզիտար ստացականի շուկայական արժեքի (հաշվարկվում է գործարքի օրվան նախորդող առևտրային օրվա (trade date) փակման գնով), պարտատոմսերի անվանական

	արժեքի կամ արժեթղթերի վաճառքից ստացված դրամական միջոցների գումարի նկատմամբ (եթե դրամական միջոցները դուրս են բերվում): IV բաժնով սահմանված սակագները, նման դեպքում չեն կիրառվում:
VIII. **Արժեթղթերի արգելադրում*****	
Արժեթղթերի առևտրային արգելադրում	Անվճար
Արժեթղթերի ոչ առևտրային արգելադրում հաճախորդի նախաձեռնությամբ	Արգելադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից
Արժեթղթերի ոչ առևտրային արգելադրում դատարանի վճռով	Անվճար
IX. **Արժեթղթերի արգելադրման դադարեցում*****	
Արժեթղթերի արգելադրման դադարեցում հաճախորդի նախաձեռնությամբ	Անվճար
Արժեթղթերի առևտրային արգելադրման դադարեցում արժեթղթերի վաճառքի արդյունքում	Անվճար
Արժեթղթերի արգելադրման դադարեցում արգելադրման ժամկետը լրանալու կապակցությամբ	Անվճար
Արժեթղթերի արգելդրման դադարեցում դատարանի վճռով	Անվճար
X. **Արժեթղթերի գրավադրում և գրավադրման դադարեցում*****	
Բաժնային արժեթղթերի գրավադրում	Գրավադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.1%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 3,000,000 ՀՀ դրամից
Պարտատոմսերի գրավադրում	Գրավադրվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.02%, բայց ոչ պակաս 3,000 ՀՀ դրամից և ոչ ավել 600,000 ՀՀ դրամից
Արժեթղթերի գրավադրման դադարեցում	Անվճար
XI. **Տեղեկատվության տրամադրում**	
Դեպո հաշվից քաղվածքի տրամադրում (բացառությամբ գործառնության կատարումից հետո առաջին անգամ քաղվածքի տրամադրման դեպքի)	1,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Դեպո հաշվով կատարած գործառնությունների մասին տեղեկանքի տրամադրում (բացառությամբ գործառնության կատարումից հետո առաջին անգամ տեղեկանքի տրամադրման դեպքի)	3,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Հաճախորդին ամսական հաշվետվության տրամադրում	Անվճար

Հաճախորդի հարցման հիման վրա այլ տեղեկությունների վերաբերյալ դեպո հաշվից տեղեկանքի տրամադրում առանց հիմքերի	3,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Հաճախորդի հարցման հիման վրա այլ տեղեկությունների վերաբերյալ դեպո հաշվից տեղեկանքի տրամադրում հիմքերով	Էլեկտրոնային եղանակով՝ 5,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) Թղթային եղանակով՝ 8,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Օրենքով և արժեթղթերի շուկան կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված այլ անձանց կողմից ներկայացված հարցումների վերաբերյալ պատասխանների ներկայացում	Անվճար, եթե այլ բան սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ

* Տե՛ս առևտրային հարթակների սակագները հետևյալ հղումով՝ https://inviabroker.com/fee-schedule/
** Դրամական փոխանցումների հետ կապված բանկերի միջնորդավճարները վճարվում են Հաճախորդի կողմից:
*** Երրորդ կողմ հանդիսացող դեպոզիտարիաների սակագները վճարվում են Հաճախորդի կողմից:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
I. **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	
1) Խորհրդատվական ծառայություններ	Պայմանագրային (կախված ծառայության ծավալից և բովանդակությունից)